—Այո՛, պարոն: Ես պէտք է խոստովանվեմ, որ ես ափսոսեցի, թէ ինչու չինականները առաջուց չը սպանեցին նրան, բայց հէնց որ ես հասայ, այլ ես այնուհետև անյարմար էր: Լեհացիները անպատճառ կասէին, թէ նրան սպանեցին վրէժխնդրութեան համար, Կատերինայի համար, և այդ վատ ստուեր կը ձգէր մեր գործի վրա: Մենք նրա ձեռքերն ու ոտքերը պինդ կապեցինք, և բոլոր աղնուական խառնիճաղանճը լցրինք հէնց նրա սահնակի մէջ, և տարանք Կալօմէյի նահանգային վարչութիւնը, որտեղ ես ինքս հասցրի բոլոր ժամացոյցները, փողերը և մատանիները, որ գտնվեցան թուով քսան աղնուականների մօտ: Ա՛խ, դա զեղեցիկ ժամանակ էր, պարոն: Խղճուկները պատերազմում էին իրանց հարստահարիչների հետ և ամեն տեղ թագաւորում էր սուրբ կարգապահութիւն. չինական պահապանները կանգնած էին բոլոր ճանապարհների վրա. գիւղացիները պատառոտած ցնցոտիներով մտնում էին նահանգային վարչութիւնը, դուրս էին բերում իրանց ծոցից հազարներ և պատուաւոր կերպով գնում էին սեղանի վրա: Մենք հաճութեամբ մեր անձը ենթարկում էինք հրացանների գնդակներին, բայց համարեա միշտ զինաթափ էինք անում լեհաց աղնուականներին, և մեզանից ամեն մէկը պատրաստ էր հաճութեամբ թափել իր արիւնը: Ամեն ոք յոյս ունէր, որ բոլոր տարբերութիւնները կը ոչնչանան, որ բոլորը ազատ կը լինեն և հաւասար իրանց իրաւունքների մէջ: Մեզանից յետոյ արևմտեան լեհական գիւղացիները սկսեցին սպանել իրանց կալուածատէրներին. այն ժամանակ ուղարկեցին մեծ զօրք և դուրս եկաւ ոչ այն, ինչ որ մենք սպասում էինք: Այսուամենայնիւ, երկու տարի անցնելուց յետոյ, բոլորին ազատութիւն շնորհեցին, աղայութիւնը ոչնչացաւ, և այժմ չինականը դարձաւ ազատ մարդ:

—Ինչով վերջացաւ գործը ձեր կալուածատիրոջ հետ,—հարցրի ես:

—Նրան չզթայակապ տարան բերդը,—ձայն տուեց Կօլանկօն,—իսկ նրա բացակայութեան ժամանակ նրա կինը բարեկամացաւ մի զինուորի հետ, բայց 1848 թուականին բոլոր ապստամբներին ներումն շնորհվեցաւ, և նա վերադարձաւ իր տեղը:

—Նրանից յետոյ, ես վերադարձայ իմ ծառայութեան տեղը,—ասաց Բալաբանը:—Մենք գնացինք Վենդրիա, ձմեռը անցանք Կարպատեան լեռները, մատակցեցինք մի քանի կռիւների մէջ, երբեմն յաղթում էինք, երբեմն յաղթվում էինք, իսկ վերջը սաստիկ ցրտերի պատճառով ստիպված էինք մնալ: Մարդիկ ժպիտը երեսին ընկնում էին և սառչում էին ճանապարհների վրա: Գարունքին նորից սկսեցին հետամուտ լինել մաջարներին, մինչև Կօշուտը, որպէս մի սկիւռ, չը փախաւ անտառից: Նշանաւոր ժամանակ էր, պարոն: Մարդիկ ճանճերի նման ընկնում էին, ոմանք գնդակներից, ոմանք սրերից, ոմանք ես կամ ջրասոյզ էին լինում կամ ճանապարհի վրա սառչում էին, համբուրելով մահուան վերջին րոպէում փոքրիկ քսակը, որ լցրած էր հայրենիքի հողով.—նրանց բոլորին դեռ խիստ ցանկալի էր կեանքը, բայց ինձ ոչինչ չէր դրաւում: Այն ժամանակ ինձ սկսեց տիրել մի երկմտութիւն:—Ո՞րտեղ էր արդարութիւնը: Վենդերեան պատերազմից յետոյ ես դուրս եկայ ծառայութիւնից, որովհետև հայրս վախճանվեցաւ:

—Բայց ոչ նրա համար:

—Ի՞նչպէս,—պատասխանեց Բալաբանը, ուսերը շարժելով,—ինչ յարմարութիւն մի պաշտօնաթող զինուորի և մի տիկնոջ մէջ: Եւ այսպէս, ես եկայ տուն, և հօրս ու մօրս մեռած գտայ: Այժմ ես մենակ մարդ էի: Հօրս թողած հողը մնաց ինձ, բայց մնացած բոլորը վաճառված էր, մինչև անգամ խրճիթը և երկու, երեք մրգի ծառեր: Հիմա ինչպէս է թւում ձեզ այդ:—Այո՛, ինչ կարելի էր անել այնուհետև: Ես միշտ սիրում էի անասուններին և մեղուաբուծութիւնը: Ահա ես սովորեցի մեղուների պահպանութեան եղանակը, ծանօթացայ նրանց սովորութիւնների հետ և ասեն մօտ չինեցի ինձ համար մի փառաւոր մեղուանոց,—դուք գիտէք այդ. յետոյ մեծացրի երկու շներ, որոնք կատաղած գայլերի նման էին, գեղեցիկ շներ, գիշերը նրանց մութաբաղոյն աչքերը չիկացրած ածուխի նման փայլում էին,—դուք դրանց նոյնպէս գիտէք,—և վարձվեցայ դաշտային պահապանի պաշտօնում: Պատահմամբ գտայ ինձ համար և մի կատու (այդ միջոցին նա ծիծաղեց, որպէս ամեն մի գալիցիացի չինական, երբ նա խօսում է կատուների մասին),—ես դուրս հանեցի նրան ջրից, դուք, կարծեմ, տեսել էք իմ Մացիկ անունով կատուին:

—Դուք մէկ տեսնէիք դրա շները, պարոն,—նկատեց թղթէ մարդը մի առանձին հրճուանքով, որի մէջ նշմարվում էր նախանձի խառնուրդ:

—Ախար նա կարժէ իր շներին,—ձայն տուեց Կօլանկօն:—Այսպիսի դաշտային պահապան երբէք չէ եղել: Համայնքը պէտք է շնորհակալ լինի Աստուծուց:

—Խնդրում եմ ձեզ,—նկատեց զինուորը,—մի անհանգստացրէք պարոնին այսպիսի տեղեկութիւններով:

—Դուք սխալվում էք,—ասեցի ես,—ինձ հետաքրքրական է բոլորը, ինչ որ վերաբերում է ձեզ:

—Այդ արդէն շատ մեծ պատիւ է:

—Հա, այդ մարդը կատարում է իր պարտաւորութիւնը,—ծանր կերպով ասաց թղթէ մարդը, ցոյց տալով Բալաբանին:—Ես չեմ սիրում դովել մարդկանց, բայց ինչ որ ասում եմ, կատարեալ ճշմարտութիւն է: Գողերը վախենում են դրանից, արբեցած մարդիկ իսկոյն զգաստանում են, հէնց որ հանդիպում են դրան: Եթէ յանձնում են դրան հաւաքել որ և է տուրք, դա աւելի շուտով կը հաւաքէ, քան թուով քսան ձեր հաւանած հարկահաններ:

—Ընտրութիւնների ժամանակ գիւղացիները աւելի դրան են լսում, քան թէ դատաւորին կամ վերակացուին,—աւելացրեց Մօնգօլը:—Եթէ դուք, պարոն, ցանկանում էք, որ ձեզ ընտրեն մի որ իցէ պաշտօնի մէջ մեր վիճակում, բաւական է, և որ դուք ասէք Բալաբանին, նա ամեն ինչ կարող է անել մեր ժողովրդի հետ:

—Բայց խնդրում եմ ձեզ, դրացիներ, դադարեցէք,—հանդարտ կերպով խօսեց զինուորը:—Ինչպէս ինչ պէտք է լինի մեր գործը, եթէ ոչ կատարել մեր պարտաւորութիւնները:

—Ախար ես ոչինչ չեմ ասում,—մռմռաց Կօլանկօն:—Բայց կնիկները... Դա մեզանում բարոյականութեան կատարեալ ուսուցիչ է, պարոն: Ահա, օրինակ, մեր գիւղում կայ մի գեղեցկատեսակ աղջիկ. գեղեցիկ է նա, որպէս մի պայծառ աստղ երկնքում. նա կարող էր կոմսուհի լինել, բայց շատ թեթևամիտ է: Դա գիշերը պատահում է նրան և տեսնում է, որ նա զբօսնում է լուսնի լուսով:—Դարձեալ, երևի, մէկի հետևից ես ընկած,—սկսում է իմ Բալաբանը:—Քեզ ինչ:—Այսպէս աւելի հեշտ կը դժբախտացնես քեզ, երբոր նա քեզ կը ձգէ. աւելի լաւ է, որ մարդու գնաս: Աղջիկը ծիծաղում է,—Ես չեմ գնայ, ասում է, ամեն մի պատահածին. դու ինքդ ուզիր ինձ, ես իսկոյն կը համաձայնվեմ պսակվել:

—Իսկ նա ինչ է ասում:

—Նա միայն գլուխը շարժում է և շարունակում է խրատներ տալ աղջկան:

—Նա չէ կամենում ամուսնանալ,—նկատեց Մռայլը, որը, որպէս գիշերապահ կանգնած, ուշադրութեամբ ականջ էր դնում:

—Ա՛խ, նա դեռ ևս սիրում է այն առաջինին,—անսպասելի կերպով ձայն տուեց հրէան և ուրախ մօտեցաւ մեր խումբին: Նրա յիմար և մի և նոյն ժամանակ նենգաւոր դէմքի վրա երևաց մի զզուելի ժպիտ:

—Իմ սիրելի,—խօսեց զինուորը, չը փոխելով իր դրութիւնը,—քո գլուխը իսկ և իսկ գոլորշիացրած բաղանիք է, քո լեզուն քրտինքի մէջ է, ինքդ էլ չը գիտես, թէ ինչ է նրանից գոլորշիանում:

(Կը շարունակվի)

չինական դեսպանատանը համոզված են, թէ ֆրանսիական հասարակական կարծիքը վերջ ի վերջոյ կը խոստովանի չինական քաղաքականութեան իրաւացի լինելը և այդ պատճառով յոյս կայ, որ հարցը խաղաղ վախճան կունենայ: Դեսպանատանը համոզված են նոյնպէս, որ Սօնտէյի և Բակնինի վրա յարձակվելը կը դժուարացնի համաձայնութեան կարելութիւնը: Լուր է տարածված, որ ֆրանսական մինիստրների մի քանի որոշումների և պատգամաւորների ժողովի քուէարկութիւնների պատճառով մարկիզ Ցենգ մտադիր է հեռանալ Փարիզից:

—«Temps» լրագրի Լօնդոնի թղթակիցը գրում է. «այժմ ամենքին զբաղեցնում են կատարված ճայթիւնները երկաթուղիների վրա: Կարծում են, որ նրանց պատճառել են դինամիտ պատրաստողները: Եւ ճշմարիտ, հաւանական չէ, որ գազը ճայթիւններ պատճառէ երկու միմեանցից այդ չափ հեռու կէտերում: Ճայթիւնի ոյժը այնքան մեծ էր, որ տուննէլի երկու ծայրերում կայարանների պատուհանների ապակիները ջարդվեցան: Տուննէլի պատերը քանդված են և բաւական մեծ տարածութեան վրա հողը փոփվել է:

—«Temps» լրագրին հեռագրում են Վիէննայից, որ Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ ապստամբների խումբերի յայտնվելու մասին լուրերը սխալ են և ստացված են չերնոգորիական աղբիւրներից: Աւստրիական և ունգարական մի քանի ազատ կամաւորներ մտադիր են այցելել այդ նահանգները: Նրանց կառաջնորդէ մինիստր կալայ:

—Վիէննայից «Temps» լրագրին հեռագրում են. «Վիէննայի բոլոր լրագիրները Փարիզից հեռագիրներ են ստանում, որոնք հաղորդում են, թէ պատերազմը Ֆրանսիայի և Չինաստանի մէջ անխուսափելի է: Այդ լուրերը աղդում են Բօրսայի վրա և արժէթղթերի գները ընկնում են, մինչդեռ պաշտօնական շրջանները այդ կարծիքի չեն: Նրանք ընդհակառակը համոզված են, որ Ֆիլ Ֆերրիի աջողութիւնը պատգամաւորների ժողովի մէջ կը ստիպէ մարկիզ Ցենգին և չինական կառավարութեանը զիջումներ անել:

—Լօնդոնից «Temps» լրագրին հաղորդում են, որ եգիպտական կառավարութիւնը երեք ամսով դադարեցրեց արաբական «El-Jaman» լրագիրը «Journal des Débats» լրագրից Եգիպտոսի դրութեան մասին մի յօդուած արտատպելու համար: Լրագրի դադարման մասին կարգադրութեան մէջ ասված է, թէ եգիպտական գործերը այդ յօդուածի մէջ այնպէս են նկարագրված, որ յօդուածը կարող է յուզել հասարակական կարծիքը:

—Դիրշաուի մէջ նորերումս կալանաւորված անձնաւորութեան մասին, որ մեղադրված է իշխան Բիսմարկի կեանքին ձեռնամուխ լինելու փորձի մէջ, «Dirschauer Zeitg» հաղորդում է հետեւեալը. Մեր հաւաքած տեղեկութիւնների համեմատ կալանաւորվածը ոչ ռուս օֆիցեր է և ոչ էլ Նիհիլիստ, այլ սովորական մի խարեբայ, որ կամեցել է, որ իր մասին խօսեն կամ ձրի ընակարան ստանայ: Այդ մարդը խելագարվածի տպաւորութիւն է գործում: Հարց ու փորձի ժամանակ նա միմեանց հակասող ցուցմունքներ էր տալիս: Նա պանդոկապետ է եղել: Ապրել է մի քանի ժամանակ Ռուսաստանի և Լեհաստանի մէջ և սովորել է թէ ռուսաց և թէ լեհական լեզուները: Կառավարչական շրջանների մէջ այդ վարմունքին ոչինչ նշանակութիւն չեն տալիս:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագրի № 235 «կողմնակի հաղորդութիւններ» բաժնում տպված է պ. Մ. Ց. Մելոյենանի հետեւեալ հաղորդութիւնը. «Թուաբանութեան սիրողներին առաջարկում եմ լուծել իմ կազմած հետեւեալ խնդիրը: Այդպիսի խնդիրներ, փոփոխելով դրամագլխի, օժանդակութեան և տարեկան % (1% մինչև 12%) թուանշանները, ես պատրաստեմ լուծել 24 հատ մի ժամվայ ընթացքում ցանկացողների ներկայութեամբ: Եապոնիայի համալսարաններից մէկը կառուցվում էր 14,933 ր. 76¼ կօպ. պարտք առած գումարով, բարեգործական 17 ընկերութիւնների նուիրատուութեամբ և կառավարչական օժանդակութեամբ, որ տրվեցաւ 8 անգամ, ամեն անգամին 13,457 ր. 20⅔ կ.: Դրամագլուխը պարտք է առած հետեւեալ պայմաններով. 1) պարտատէրին դրամագլուխը վճարել չինութիւնը վերջացնելուց յետոյ և 2) նրա դրամագլուխից օգտվելու համար վարձատրութիւն տալ այն փողերը, որոնք կը մնան բարեգործական ընկերութիւնների նուէրների գործը վերջացնելուց յետոյ: Բարեգործական ընկերութիւնների նուէրները հետեւեալ չափով ստացվեցան. 5 ընկերութիւններից իւրաքանչիւրից պարտք առած գումարի 7/9, 8 ընկ. 6/7, և 4 ընկ. 5/63 նոյն պարտք առած գումարի: Դրանից յետոյ պարտքի, նուէրների և օժանդակութեան գումարից համալսարանի չինութեան կապալառուին տրվեցաւ 1/9 և յետոյ ստացվեցաւ երկրորդ օժանդակութիւն: Մնացորդից և երկրորդ օժանդակութիւնից կապալառուին տրվեցաւ 1/8 և ստացվեցաւ երրորդ օժանդակութիւնը: Մնացորդից և երրորդ օժանդակութիւնից էլ կապալառուին տրվեցաւ 1/7 և ստացվեցաւ չորրորդ օժանդակութիւն: Մնացորդից և չորրորդ օժանդակութիւնից կապալառուին տրվեցաւ 1/6 և ստացվեցաւ հինգերորդ օժանդակութիւն: Մնացորդից և հինգերորդ օժանդակութիւնից կապալառուին տրվեցաւ 1/5 և ստացվեցաւ վեցերորդ օժանդակութիւն: Մնացորդից և վեցերորդ օժանդակութիւնից կապալառուին տրվեցաւ 1/4 ստացվեցաւ եօթերորդ օժանդակութիւն: Մնացորդից և եօթերորդ օժանդակութիւնից կապալառուին տրվեցաւ 1/3 և ստացվեցաւ վերջին ութերորդ օժանդակութիւն, որի մնացորդից կապալառուին նոյնպէս տրվեցաւ 1/2 և համալսարանի չինութիւնը վերջացաւ: Իմանալ. 1) որքան մնացորդ պէտք է լինի դրամարկղի մէջ, 2) ենթադրելով, որ պարտք արած գումարը և չինութեան վերջանալուց յետոյ նուէրների մնացորդները կազմում են դրամագլուխ և պարտք առած գումարի տոկոսներ, իմանալ, թէ որքան ժամանակում պարտատէրը կը ստանար այդ տոկոսը, եթէ պարտքը տրված լիներ բաղադրեալ 7% Հեղինակի յաւելուածում գրված է. Այդ ժամանակամիջոցը որոշել տարիներով, ամիսներով և այլն մինչև վայրկեանների մասերը: Պարտք առած գումարը 14,933 ր. 76 ¾ կոպէկի տեղ հեղինակը կարող է նշանակել X և դարձեալ կը լուծէ նոյն ժամանակամիջոցի ընթացքում: Հեղինակի հասցէն այսպէս է. Серебрянный рядъ, домъ № 16: М. І. Мегвиновъ.

* * *

«France» լրագրում նորերումս մի յօդուած տպվեցաւ Ֆրանսիական դիպլոմատիայի մասին, որի մէջ հեղինակը դառնապէս դանդատվում է այն բանի դէմ, որ Ֆրանսիայի քաղաքագէտների թւում շատ քիչ հանրապետականներ կան և որ Ֆրանսական նոր դիպլոմատների մեծ մասը միապետականներ կամ օրլէանիստներ են: Իր խօսքերը հաստատելու համար յօդուածի հեղինակը իր անձնական յիշողութիւններից պատմում է հետեւեալը. «Թագաւորութեան առիթով դէպի Ռուսաստան մեր վերջին ճանապարհորդութեան ժամանակ, մեր ճանապարհի ընկեր էր և Ս. Պետերբուրգի Ֆրանսիական դեսպանութեան մի պաշտօնեայ: Մեզ հետ միասին ճանապարհորդում էին և մի քանի բարձրաստիճան ռուս օֆիցէրներ: Ինքն իրան հասկանալի էր, որ խօսակցութեան առարկան թագաւորութիւնն էր: Մեր պաշտօնեան իր հիացմունքը արտայայտեց այդ հանդիսի փառահեղութեան առիթով և յոյս յայտնեց, որ մօտիկ ապագայում ինքն առիթ կունենայ տեսնել նոյնպիսի հանդէս և Ֆրանսիայում»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Նոյեմբերի: Լրացուցիչ օրէնքի հարցը պետական բանկի մէջ հողատէրերի սօլօ-մուրհակները ընդունելու մասին օրերումս վերջնականապէս կը քննվի պետական խորհուրդի մէջ, որը մի և նոյն ժամանակ կը զբաղվի արդարութեան մինիստրութեան կարծիքի քննութեամբ, որ մանաւորապէս քննել է այն կարգը, որի համեմատ գլխաւոր նօտարիուսները պէտք է գրաւական վկայականներ տան արդէն մասնաւոր անձանց գրաւ դրած կալքերի համար: Պետական խորհուրդին ներկայացրած են առանձին յանձնաժողովից մշակված կանոնները գիւղացի զինուորների կեանքը կանոնաւորելու համար: Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը մտադիր է ընդարձակել և բարւոքել Լիբավայի, Ռիգայի և Օդէսսայի նաւահանգիստները:

ԲԵՐԼԻՆ, 3 Նոյեմբերի: Ռուսաց արտաքին գործերի մինիստրը ուղևորվեցաւ Ֆրիդրիխսրուէ:

ՎԻԷՆՆԱ, 3 Նոյեմբերի: Աւստրիական ազգային ժողովի նիստերը փակված են: Սերբիական ապստամբները գրաւեցին Կնեաժեվաց և ժամանակաւոր կառավարութիւն յայտնեցին, բայց երկու ժամ տեւող կռիւից յետոյ զօրքերը նրանց դուրս քշեցին քաղաքից: Ապստամբները Ալէքսինացի մէջ նոյնպէս իրանց ձեռքն առան իշխանութիւնը: Այնտեղ զօրքեր են ուղարկված: Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ զօրքերը վերցրին Ալէքսինաց և քաղաքի մէջ վերականգնեցին հանգստութիւնը: Ապստամբները դինաթափված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Նոյեմբերի: Լուր է տարածված, որ դիտաւորութիւն կայ կանոնների մի նախագիծ մշակել կառապանների յօգուտ քաղաքների հարկ վերցնելու մասին: Բոլոր քաղաքները, պօսադները և աւանները մի քանի խումբերի կը բաժանվին և իւրաքանչիւր խումբի համար հարկի ամենամեծ չափը կը նշանակվի, նշանակելով տուգանք հարկը չը հատուցանելու համար: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ 1884 թ. շոգենաւային նոր ընկերութիւն կը կազմվի Վոլգա գետի և նրա ճիւղերի վրա շոգենաւեր առնելու համար: Ընկերութեան կը մասնակցեն մի քանի օտար նշանաւոր գումարատէրեր:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ, 3 Նոյեմբերի: Դվինա գետը սառուցով ծածկվեցաւ: Սահնակի ճանապարհ կայ:

ՏԱՇԿԵՆՏ, 4 Նոյեմբերի: Այստեղ թեթև երկրաշարժ կար:

ԽԱՐԿՕՎ, 4 Նոյեմբերի: Պետական կայքերի մինիստրը իր եղբօր բեմական գրող Օստրովսկու հետ երէկ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ:

ՖՐԻԴՐԻԽՍՐՈՒԷ, 4 Նոյեմբերի: Ռուսաց արտաքին գործերի մինիստրին բերող երկաթուղու գնացքի հասնելու ժամանակ իշխան Բիսմարկ երկաթուղու կայարանի վրա դիմաւորեց Գիրսին և բարեկամաբար ողջունեց նրան ֆրանսերէն լեզուով:

ՀԱՄԲՈՒՐԳ, 4 Նոյեմբերի: Ռուսաց արտաքին գործերի մինիստրը, Համբուրգից անցնելով, ուղևորվեցաւ Շվեյցարիա:

ՎԻՍԲԱԴԷՆ, 4 Նոյեմբերի: Ռուսաց պատերազմական մինիստր գեներալ Վանովսկի երէկ այցելեց ունտեր-օֆիցերների ուսումնարանը Բիբրիխի մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Նոյեմբերի: Ս. Պետերբուրգի հոգևոր Ակադեմիայի ըէկտոր Եանիշեվ նշանակված է Նոցա կայսերական Մեծութիւնների խոստովանահայր, Զմերային պալատի մեծ մայր-եկեղեցու և Մոսկվայի Բլագովեշչենսկի մայր-եկեղեցու աւագ քահանայ և պալատական հոգևորականութեան կառավարիչ: 1853 թուականից մինչև սեպտեմբերի 1-ը պետական եկամուտներ ստացված են 391,634,316 ռուբլ անցեալ տարվանից 5,657,068 ր. պակաս, ծախսեր արված են 419,518,420 ր., անցեալ տարվանից 22,900,205 ռուբլ աւելի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Նոյեմբերի: Այսօր թագաւոր կայսրի և կայսրուհու ներկայութեամբ օծվեցաւ Ս. Պետերբուրգի առևտրական ընկերութեան Պետրովսկի ուսումնարանի շինութիւնը:

ՍԱՐԱՏՕՎ, 4 Նոյեմբերի: Նաւագնացութիւնը դադարեցաւ: Վոլգայի մէջ ջուրը աւելանում է: Եղանակը 5°:

ՍՕՖԻԱ, 4 Նոյեմբերի: Մի համաձայնութիւն է ստորագրված, որով որոշվում է ռուսաց օֆիցերների դրութիւնը Բոլգարիայի մէջ. պատերազմական մինիստրը նշանակվում է իշխան Ալէքսանդրից ռուսաց թագաւոր կայսրի համաձայնութեամբ, պատերազմական մինիստրը չէ միջամտում երկրի ներքին գործերին և պատասխանատու է թէ իր գործողութիւնների և թէ պատերազմական բիւդժետի համար իշխանի և պատգամաւորների ժողովի առաջ: Ռուս օֆիցերները կը մտնեն բոլգարական ծառայութիւն երեք տարով թագաւոր կայսրի թոյլտուութեամբ և պարտաւոր են հնազանդվել իշխանին, սահմանադրութեանը և Բոլգարիայի օրէնքներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Նոյեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 94 ր. 25 կ., հինգերորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ր. 75 կ., երկրորդ 208 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 37 կ., երրորդ 91 ր. 25 կ., ոսկի 8 ր. 43 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 23⅜ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 199 մարկ, Փարիզի վրա 246 ֆրանկ: Բօրսայի արտամղութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախվում է ԷՖԷՆ հեծնելու ՁԻ (եօրդա) և ԹԱՄՐ. Մինասյլօվսկայա փողոց, տուն № 129:

2—3

ԳԼՈԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա:



Միակ գործակալութիւն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ: Նոյն տեսակ ձեռագրելքանակութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ: Կան թուղթ, տետրակներ, քարեգրիչներ, քսակամաններ, մկրատներ, խալիչա-մաՀՃԱԿԱԼ, վեհամար իրեր, գոմատուցարաններ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, դդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտակալներ, երկաթէ թելերից, ձիու համար: Մակենաշներ: Բժշկական թուղթ վատերկլօզետի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ:

90—100

Կանանց ձմերային ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ, տղամարդկերանց ԳԼԽԱՐԿՆԵՐ և այլն ծախվում են էժան գներով: ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ, ԱՐԾՐՈՒՆՈՒ գալերէա:

11—12

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1884 ГОДУ ЖУРНАЛА

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“.

(ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ).

Журналъ, какъ и прежде, будетъ выходить по четвергамъ въ размѣрѣ отъ 1 до 2 печатныхъ листовъ, по слѣдующей программѣ:

I. Статьи по **всѣмъ вопросамъ**, вытекающимъ **изъ теоріи права и судопроизводства**.—II. **Перечень, изложеніе и обсужденіе** важнѣйшихъ **распоряженій** и **узаконеній** правительства.—III. **Судебная хроника**: а) отчеты о засѣданіяхъ въ судахъ, преимущественно Кавказскаго края, и б) особенно интересныя рѣшенія Кавказскихъ гражданскихъ судовъ по вопросамъ права и судопроизводства, вызваннымъ мѣстными особенностями края.—IV. **Корреспонденціи** юридическаго содержанія.—V. Краткіе **отчеты о новыхъ книгахъ** юридическаго содержанія (Обзоръ юридической печати и библіографія).—VI. **Смѣсь** (разныя извѣстія). Случаи изъ судебной жизни и практики.—VII. **Тезисы** кассаціонныхъ рѣшеній: а) кассаціонныхъ департаментовъ сената и б) Тифлисской судебной палаты.—VIII. Извлеченіе **изъ приказовъ** о важнѣйшихъ назначеніяхъ по вѣдомству юстиціи.—IX. **Судебный указатель. Резолюціи** Тифлисской судебной палаты по дѣламъ **апелляціоннымъ** и **кассаціоннымъ**.—X. **Объявленія**—казенныя и частныя.

При всей трудности изданія юридическаго органа на далекой окраинѣ Россіи, необходимость и полезность такого органа на Кавказѣ доказывается вступленіемъ „Юридическаго Обозрѣнія“ въ **четвертый** годъ своего существованія. Въ настоящее время редакція заручилась сотрудничествомъ многихъ юристовъ, врачей и публицистовъ. Мы можемъ указать, какъ участниковъ въ нашемъ журналѣ: **К. Г. Анциферова, Д. З. Бакрадзе, Ѳ. А. Быкова, Ѳ. К. Бакало, Кн. К. А. Бебутова, Г. Г. Гвиніева, А. А. Гребенщикова, С. І. Гулишамбарова, Н. А. Дингельштета, К. В. Долгова, Г. А. Джаншіева, Г. И. Еджубова, Д. И. Кипіани, Д. В. Квиркеліа, П. И. Ковалевскаго, П. М. Лебединскаго, Я. И. Лудмера, Н. Я. Николадзе. П. А. Опочинина, Д. П. Пурцеладзе, Я. И. Рашета, Н. П. Смиттена, В. Д. Спасовича, А. В. Степанова, А. А. Ѳон-Ашеберга, В. А. Хлѣбникова, Н. А. Шаврова** и др.

Въ распоряженіи редакціи имѣются статьи, какъ мѣстнаго, кавказскаго, такъ и общаго интереса. Изъ числа ихъ предназначены къ печатанію въ 1884 году: **матеріалы для новыхъ Уложеніи—Уголовнаго и Гражданскаго**, о **водовладѣніи** на Кавказѣ и другихъ мѣстахъ по законамъ: царя Вахтанга, шаріату и др., о **межеваніи**, о **пошлинахъ**. о **литературной**, и **музыкальной собственности**, о **нефтяныхъ** законахъ въ разныхъ странахъ, о **колоніяхъ** преступниковъ, о **сельской адвокатурѣ**, о **безпріютныхъ дѣтяхъ**, о формѣ **суда присяжныхъ** на Кавказѣ, о **хизанахъ**, о **саношенахъ**, о **древне-армянскомъ** законодательствѣ (изслѣдованія Мхитара-Гоша), о **мусульманскихъ** законахъ на Кавказѣ, о **древне-еврейскомъ законодательствѣ** и пр.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Редакція и администрація журнала (для пріема подписки, объявленій и розничной продажи)—Тифлисъ, Сололакская ул., д. кн. Меликова.

Подписная цѣна на журналъ, съ доставкою и пересылкою: на годъ—**10 р.; на 6 мѣс. 6 р.; на 3 мѣс.—3 р. 20 к.; на 1 мѣс.—1 р. 25 к.** Подписываться можно перваго числа каждаго мѣсяца **и не далѣе конца года**.

Разсрочка въ платежѣ денегъ допускается—**для годовыхъ** подписчиковъ: при подпискѣ 4 р., въ мартѣ и апрѣлѣ по 3 р., и **для полугодовыхъ**; при подпискѣ 3 р. и черезъ два мѣсяца еще 3 р.

При перемѣнѣ адреса вносятъ **40** к.

Объявленія, казенныя и частныя—строка петита **10** коп., $^1/_2$ страницы **3** р. **25** к., цѣлая стран. **6** руб. **50** коп.

Подписка и **объявленія принимаются также въ Москвѣ и Петербургѣ**, въ книжныхъ магазинахъ **И. П. Анисимова.**

Отдѣльные №№ „Юрид. Обозр.“ продаются **по 25 коп. въ Тифлисѣ, въ Центральной книжной торговлѣ** и въ г. **Кутаисѣ**, въ книж. маг. **Чиладзе.**

Статьи должны имѣть подпись и адресъ ихъ автора, для свѣдѣнія редакціи, и могутъ подлежать **передѣлкамъ и сокращеніямъ.—Статьи безъ означенія условій гонорара признаются безплатными.— Обратная пересылка** рукописей для редакціи **не обязательна.**

При доставленіи въ редакцію „Юридическаго Обозрѣнія“ экземпляра юридическаго сочиненія, о немъ будетъ данъ отчетъ и сдѣлана публикація.

ՍԻԳԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ա. Դ. ՏՕՊԷՐԻ

Ս. Պետերբուրգի մէջ։ Զերնիշեով պերէուլօկ, № 4։ Սիգարներ շատ լաւ յատկութեան 1 բուբլօց մինչև 16 բուբլ հարիւրը։ Կարելի է ըստանալ Ռուսաստանի ծխախոտների բոլոր խանութների մէջ։

2—12

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԿՈՐԱՑԱԾ ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻԲԻ Բ. ՐԷՑԻԻԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, ՊԱՎԼԷՑ ՓՈՂՈՑ, № 24, առաջարկում է ամեն տեսակ կորացած կարասիք, որ գերազանցվում է ամրութեամբ, լաւ և մաքուր շէնքով և էժան է ծախվում։ Առևտրականների համար պայմանները ձեռնտու. են։

4—6 (1)

Ներսիսեան Հայոց ազգային հոգևոր ղպրոցի հոգաբարձական խորհրդարանում նոյեմբեր ամսոյս 16-ին, երեկոյեան 8 ժամին, կը լինի աճուրդ (առանց կրկնաձրգի) կապալով տալու նոյն դպրոցի կալուածքը № 49 (ընծայած հանգուցեալ Յարութիւն Օքոյեանցից, որ գտանվում է Կուր գետի հեղեղատի (սաղի) վրա։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամէն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10-ից յ12 ժամն։

1—3

ԲԻԲԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրամագառանոցում, որ գտնվում է Թիֆլիսում, Զուբալովի տանը, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, ստացվեցաւ Կ. Պոլսում հայերէն, կովկասեան աշխարհաբար լեզուով տպված, „ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ“ (հին և նոր կտակարան)։

Գինը, գեղեցիկ կազմով 1 ր. 50 կոպէկ է։

6—10.

ՄԱՐԻԱՄԵԱՆ—ՅՈՎՆԱՆԵԱՆ

օրիորդաց ուսումնարանի խորհրդարանը պատիւ ունի յայտնելու Թիֆլիսի յարգոյ հայ հասարակութեանը, որ նոյեմբերի 6-ին կիւրակէ, առաւօտեան 11 ժամին, Կուսանաց եկեղեցում Ս. Պատարագից յետոյ, կատարվելու է ուսումնարանիս հիմնադիր հոգաբարձու ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆՑԻ հանգուցեալ տիկնոջ և նրա հանգուցեալ որդոց հոգեհանգիստը, յետոյ, 12 ժամին, ուսումնարանի դահլիճում լինելու է դպրոցիս հիմնադրութեան ՏՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԷՍԸ։

ՏԵՍՈՒՉ Յ. ՉԻԳԵԱՆԵԱՆՑ

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ընդհանուր գիտութեան, որ նոյեմբերի 1-ից ներկայ թվի քաղաքային հարկերի ընդունելութիւնը կատարվելու է վարչութեան կասսայում ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև 2 ժամ և երեկոյեան 6 ժամից մինչև 8 ժամ։

3—3

СЪ I-ГО ЯНВАРЯ 1884 ГОДА

ВЪ ТИФЛИСѢ БУДЕТЪ ИЗДАВАТЬСЯ

новая ежедневная (350 нумеровъ въ годъ) литературно-политическая газета

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

подъ редакціею А. В. Степанова (бывш. редакторъ „Юридическаго Обозрѣнія“).

Объемъ газеты—печатный листъ средняго формата; программа—общая всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ.

Подписная цѣна съ пересылкою и доставкою: на годъ—**10** руб.; **на 6** мѣсяц.—**6** р., на **3** мѣс.—**3** р. **50** к., на **1** мѣс. **1** р. **50** к.

Подписка (городская и иногородная) и объявленія (по 5 к. за **строку петита**) принимаются **въ Тифлисѣ** исключительно **въ Газетномъ Агентствѣ В. Шавердова**, въ **С.-Петербургѣ-же и Москвѣ**—въ книжныхъ магазинахъ **„Новаго Времени“**.

Временное (до 15-го декабря) помѣщеніе редакціи: Давидовская ул., д. Кананова, квартира редактора.

За газетой обезпечено **постоянное сотрудничество: кн. К. А. Бебутова, Вс. М. Гаршина, П. А. Измайлова, С. Н. Кривенко, Н. Я. Николадзе, П. А. Опочинина, А. Н. Плещеева, И. Ф. Тхоржевскаго, Гл. И. Успенскаго, Н. А. Шаврова.**

Съ 1-го января 1884 г. начнетъ выходить при редакціи **„ТЕХНИЧЕСКАГО ОБОЗРА“**, въ С.-Петербургѣ, Троицкій пер., № 40, сельско-хозяйственный журналъ: **„ПРОГРЕССИВНОЕ СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО“**, еженедѣльный журналъ новѣйшихъ открытій и усовершенствованій въ сельскомъ хозяйствѣ и кустарныхъ производствахъ, съ безплатнымъ приложеніемъ еженедѣльной общественной и литературной газеты **„РОДИНА“**, по нижеслѣдующей программѣ:

1) **Правительственныя распоряженія и узаконенія**, относящіяся къ сельско-хозяйственной и кустарной промышленности.
2) **Полеводство.** 3) **Лѣсоводство.** 4) **Садоводство.** 5) **Скотоводство.** 6) **Пчеловодство.** 7) **Рыбоводство.**
8) **Сельско-хозяйственные рецепты и наставленія.**
9) **Патенты по сельскому хозяйству**, какъ русскіе, такъ и иностранные, съ пояснительными политипажами.
10) **Сельско-хозяйственная механика**, съ пояснительными чертежами.
11) **Сельско-хозяйственная строительная архитектура**, съ пояснительными чертежами и планами.
12) **Кустарныя производства.**
13) **Спортъ и охота.**
14) **Домашнее сельское хозяйство, находящееся въ веденіи хозяекъ.**
15) **Сельско-хозяйственная библіографія** на русскомъ, польскомъ, нѣмецкомъ, французскомъ и англійскомъ языкахъ.
16) **Телеграммы съ торговыхъ рынковъ**, главнѣйшихъ городовъ Россіи и иностранныхъ государствъ, о торговлѣ сельско хозяйственными продуктами.
17) **Торговая корреспонденція.**
18) **Вопросы и отвѣты** по всѣмъ отраслямъ сельскаго хозяйства и кустарной промышленности.
19) **Экономическій отдѣлъ**, въ которомъ будутъ помѣщаться:
а) Статьи, касающіяся нуждъ и улучшеній сельскаго хозяйства и кустарной промышленности.
б) Статьи, могущія имѣть соприкосновеніе съ экономическою жизнью сельскихъ хозяевъ, сельскихъ хозяекъ и кустарныхъ производителей.
в) Статьи, имѣющія цѣлью способствовать развитію сельско-хозяйственной и кустарной промышленности и сдѣлать ихъ болѣе производительными и болѣе выгодными.
20) **Смѣсь.** 21) **Объявленія.**

Въ газетѣ **„Родина“** будутъ помѣщаться: Современныя событія; общественныя дѣла; отечественная исторія; науки, искусства и художества; изящная словесность: романы, повѣсти, разсказы и стихотворенія; критика; обзоръ журналовъ по всѣмъ отраслямъ знанія; иностранная хроника; столичная и провинціальная жизнь; новѣйшія заграничныя извѣстія и проч. и проч.

По мѣрѣ надобности, къ журналу „Прогрессивное Сельское Хозяйство“ будутъ прилагаться чертежи и планы.

Жуналѣ будетъ выходить еженедѣльно.

Подписная цѣна на журн. „Прогрессивн. сельское хозяйство“, съ прилож. газеты „Родина“, 4 Р. съ пер. 6 Р. на 1 годъ.

Достойно удивленія, что въ Россіи, странѣ по преимуществу земледѣльческой, не имѣется ни одного частнаго сельско-хозяйственнаго журнала, хотя, какъ всякому практику извѣстно, въ настоящее время, когда природная плодотворность земли уже истощена, земледѣліе можетъ процвѣтать лишь при условіи веденія его на основаніи научно-практическихъ данныхъ, и поэтому, появленіе каждаго новаго изданія, способствующаго этой цѣли, должно быть встрѣчено съ полнымъ сочувствіемъ.

Дозволено цензурою, Тифлисъ, 5 Ноября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.